«ԻՆՏԵՐԱԿՏԻՎ ԿՐԹՈՒԹՅԱՆ ԶԱՐԳԱՑՈՒՄ»
ՀԻՄՆԱԴՐԱՄ

ՀԵՐԹԱԿԱՆ ԱՏԵՍՏԱՎՈՐՄԱՆ ԵՆԹԱԿԱ ՈՒՍՈՒՑԻՉՆԵՐԻ ՎԵՐԱՊԱՏՐԱՍՏՄԱՆ ԴԱՍԸՆԹԱՑ 2022

ՀԵՏԱԶՈՏԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔ

ԹԵՄԱ	Սարդարապատ. Միասնության ուժը
ԱՌԱՐԿԱ	պատմություն
ՀԵՂԻՆԱԿ	Նաիրա Ղարիբյան
ՄԱՐԶ	Կոտայք
ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ՀԱՍՏԱՏՈՒԹՅՈՒՆ	Հրազդանի թիվ 2 հիմն. դպրոց

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

Ներածություն……2

Թուրքական զորքերի ներխուժումը Հայաստան……4

Սարդարապատի հերոսամարտի պատմական նշանակությունը……9

Եզրակացություն……15

Օգտագործված գրականությոն ցանկ……17

ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ

Հայ ժողովրդի բազմադարյան պատմությունը հարուստ է ազատության ու անկախության համար մղված պայքարի հերոսական էջերով: Հայաստանի պատմության ամենաողբերգական ժամանակաշրջանը եղավ առաջին համաշխարհային պատերազմի տարիները:

1915թ. Օսմանյան Թուրքիայի արյունոտ ձեռքով ոչնչացվեցին և անապատները քշվեցին Արևմտյան Հայաստանի ավելի քան մեկուկես միլիոն բնակիչներ:Դա մարդկության նորագույն պատմության առաջին ցեղասպանությունն էր: 1918թ. այդպիսի վտանգի եզրին էր կանգնած Արևելյան Հայաստանը: Հոկտեմբերյան սոցիալիստական Մեծ հեղափոխության հաղթանակից

հետո Անդրկովկասի ազգայնական կուսակցությունները՝ հայ դաշնակները, վրաց մենշիկները և Ադրբեջանի մուսաֆաթականները թշնամական դիրք բռնեցին Ռուսաստանում ստեղծված սովետական իշխանության նկատմամբ, ստեղծելով հակահեղափոխական կառավարություն(Անդրկովկասյան Սեյմ):Այն Անդրկովկասի ժողովուրդների շահերին հակառակ երկրամսն անջատեց Սովետական Ռուսաստանից:Անդրկովկասյան Սեյմի կույր քաղաքականության հետևանքով ստեղծվեց չափազանց ծանր իրավիճակ, որից էլ արագորեն օգտվեց թուրքական բանակը: ,,Երբ այլևս չի լինում ոչ մի ճար ,խենթերն են գտնում հնար,,,- և

իսկապես եղեռն տեսած,բզկտված ժողովուրդը ՝ հասկանալով ,որ նահանջելու տեղ չունի ստիպված է լինում համախմբվել ,մի բռունցք դառնալ ,,Մահ կամ ազատություն ,,նշանաբանով հրաշքներ գործել;

1918 թ. մայիսյան հերոսամարտերը մեր պատմության փառապանծ էջերից են: Դրանցով հայ ժողովուրդը նվաճեց ապրելու և հարատևելու իր իրավունքը:Սարդարապատում, Բաշ-Ապարանում և Ղարաքիլիսայում կասեցնելով թուրքական բանակի հարձակումը՝ հայկական կանոնավոր զորքը և աշխարհազորը փրկեցին Արևելյան Հայաստանը վերջնական կործանումից:

Գլուխ առաջին

Թուրքական զորքերի ներխուժումը Հայաստան

1918թ. փետրվարին, թուրք զավթիչները վերսկսելով հարձակումը վերագրավեցին Արևմտյան Հայաստանը և ներխուժեցին «անկախ Անդրկովկաս» : Եթե Փետրվարյան հեղափոխությունից հետո Ժամանակավոր կառավարության վերաբերմունքը կարծես դրական էր հայ ժողովրդի հանդեպ, ապա Հոկտեմբերյան հեղափոխությունից հետո Անդրկովկասի կառավարությունը ստոր կերպով դավաճանեց հայ ժողովրդին՝ նրան մենակ թուրքական վտանգի առաջ: 1918թ. ապրիլին սկզբին թուրքական բանակն անցավ 1914թ. պետական սահմանը: Մայիսի 15-ին թուրքերը գրավեցին Ալեքսանդրապոլ քաղաքը: Բագրատ Ուլուբաբյանը հարկ է համարում նշել 6,որ հայոց հրամանատարությունը ի դեմս Թովմաս Նազարբեկյանի գործնական որևէ քայլ

չկատարեց թուրքերի ճանապարհը ավելի վաղ փակելու համար,և թշնամին հայտնվեց Երևանի մատույցներում; Արևելյան Հայաստանին սպառնում էր ստրկացման և հայ ժողովրդի բնաջնջման վտանգը: Թուրքական բազմահազարանոց բանակը ներխուժեց Արարատյան դաշտ՝ Հայաստանի սիրտը և մայիսի 21-ին գրավեց Սարդարապատ գյուղն ու երկաթուղային կայարանը: Մայիսի 22-ին սկսեց հարձակումը Երևանի ուղղությամբ: Երևանը հայերի վերջին ապավենն էր:Հանձնել Երևանը նշանակում էր կորցնել ամեն ինչ: 1 Արարատյան աշխարհի այս հինավուրց հողում

Սարդարապատի ամայի դաշտում 1918թ. մայիսի 22-ից մինչև մայիսի 26-ը տեղի ունեցավ հայ ժողովրդի բախտորոշ կռիվը թշնամու դեմ: Սարդարապատի ճակատամարտը պայքարի ելած ժողովրդական մասսաների անձնազոհության և խիզախության փայլուն արտահայտությունը հանդիսացավ:[2,էջ 3] 2 Նոր ժամանակներում իր գոյատևման համար հայ ժողովրդի մղած գոտեմարտերից, իրավամբ, ամենավճռականը Սարդարապարինն էր. այդպես էր գնահատվում մեզնից շուրջ վաթսուն տարի առաջ և նույն կերպ է դիտվում մեր՝ ժամանակակիցներիս կողմից; [2] Կյանքի գնով հաղթանակի հասնելու պատրաստ զինվորների կողքին կանգնել էին ծերերը,կանայք, դեռատի աղջիկները: Ճակատամարտը վճռական նշանակություն ուներ հայ ժողովրդի ֆիզիկական

բնաջնջումը կանխելու գործում, հանդիսացավ ապրելու և գոյատևելու նրա անդրդվելի կամքի վկայությունը: Թուրքերի համար առաջխաղացման միակ ուղին անկենդան անապատում երկաթուղին էր, որով և շարժվում էր նրանց զորաբանակը: [1, էջ 513] Մինչ ճակատամարտը սասունցիների գունդը՝ հարմանատարներ Մուշեղի ,Մանուկի և Մորուք Կարոյի գլխավորությամբ գրավեցին Թալինի անառիկ համարվող բերդը; ,,Թալինի բերդը ռազմական բացառիկ նշանակություն ունեցավ մեր փոքր երկրին համար ,անիկա ոչ միայն կիշխեր Էջմիածնի և Աշտարակի վրա , այլ նաև տևական սպառնալիք մըն էր Երևանի համար; Հետագային , երբ Սարդարապատի կռիվները տեղի ունեցան ,այն ատեն միայն հասկցվեցավ մեր շարծման կարևորությունը[,5,էջ 372] Թշնամու հայտնվելը Արարատյան դաշտում սարսափելի խուճապ առաջացրեց; …Անօրինական և հանկարծական խուճապն այնպիսի սրտաճմլիկ դրվագներու և տեսարաններու հանդիպեցնել տվավ մեզի ,որ Վանի 11- օրյա նահանջի՝ 1915 թ հուլիսի տանջալից թշվառությունները այլևս մսեմացան մեր աչքեն,,; Բայց շնորհիվ Երևանի դիկտատոր Արամ Մանուկյանի հնարավոր եղավ վերահսկելի դարձնել գաղթը; Թիկունքում խուճապի արագ սանձահարումը և կարգուկանոնի վերահաստատումը դարձան

ապագա հաղթանակի գրավականը,[5, էջ 372] Ճակատամարտից առաջ Երևանյան ջոկատի հրամանատար Մովսես Սիլիկյանը այցելեց Ամենայն հայոց կաթողիկոս Գևորգ Ե-ին, բայց կաթողիկոսը կտրականապես մերժեց նրա առաջարկը `ապաստանել Սևանում ; ,,Ասացեք հայ բանակին , որ ես տեղիցս չեմ շարժվում ,ես չեմ թողնում Սուրբ Էջմիածինը, եթե մեր զինվորները այն չեն կարողանում պաշտպանել և թուրքերը մտնելու են Ս. Էջմիածին, իմ դիակը պիտի գտնեն Ս. Իջման սրբավայրում;,[,5-էջ 373] Գլուխ երկրորդ Սարդարապատի հերոսամարտը Սարդարապատի պաշտպանության կազմակերպումը վստահվեց 1914-1917թթ. ռուս-թուրքական պատերազմի հերոս, գնդապետ Դանիել-Բեկ Փիրումյանին:Նա իր զորքերը տեղաշարժեց Արաքս գետի ձախ ափը:

1918թ. մայիսի 22-ն էր, կեսօր...Սկսվեց Սարդարապատի ճակատամարտը: Նույն օրը հայտնի

գիտնական,Գևորգյան ճեմարանի տեսուչ Գարեգին Հովսեփյանը պայքարի հանեց Էջմիածնի և մոտակա գյուղերի բնակչությանը: ...Հինավուրց դաշտում, Էջմիածնից մինչև Սևան,Արաքսից մինչև Արագածի լանջերը անընդհատ հնչում էին եկեղեցիների զանգերի ղողանջները,որոնք վեց օր շարունակ սրբազան պատերազմի էին կոչում հայ ժողովրդին: Գեներալ Սիլիկյանի հրամանով պայթեցվեցին Արաքս գետի Մարգարայի և Կարակալայի կամուրջները, որի հետևանքով Սուրմալուն գրաված թուրքական զորքերը մնացին կտրված Սարդարապատի ռազմաբեմից:

Դրոն և Սիլիկյանը Երևանի Հայոց Ազգային խորհրդում Արամի մոտ հայտարարում են -Մենք որոշել ենք ,կռիվ պիտի տանք Երևանի փողոցների մեջ և մեր դիակները պիտր թափենք Երևանի մեջ ,-հայտարարում է Դրոն , ես ձեզ խոսք եմ տալիս ,որ Էջմիածնում կմեռնեմ ,-ավելացնում է զորավար Սիլիկյանը,[,5.էջ 374] Առաջին մարտը հաղթանակով պսակվեց:Թուրքական 10-հազարանոց «Գելիբոլու» դիվիզիայի առաջատար զորամասերը ջախջախվեցին:Երեկոյան, զորքերն ազատեցին Սարդարապատ կայարանը:Թուրքական զորքերը խուճապահար նահանջում էին... Երևանը, որ մայիսի 19-ին քաղաքային դումայի դավաճանական որոշմամբ պատրաստվում էին հանձնել թուրքական զորքի ողորմածությանը, խանդառավառությամբ ընդունեց երկար սպասված առաջին հաղթանակի լուրը:Այդ օրը Երևանում ստացված հեռագրերից մեկը հայտնում էր. «Մեր քաղաքի մարտիկները ետ են գրավել Սարդարապատի կայարանն ու գյուղը, ռմբակոծության ժամանակ վնասվել է կայարանի միակ ջրհան աշտրակը:Ջուր չկա, հաղթական զորքը ծարավ է...»:[3, էջ 51] Երևանցիները այս լուրը լսելով անմիջապես հավաքեցին հաց, շաքար, թեյ, ծխախոտ, կժերով ու դույլերով ջուր և օգնության գնացքը երկար սուլոցներով եկավ Սարդարապատ: Կրած առաջին պարտությունից հետո թուրքական դիվիզիայի մնացորդները ամրացան մերձսարդարապատյան երկու բարձունքների վրա:Դրանց վրա կազմակերպված գրոհներից մեկի ժամանակ հերոսաբար ընկավ շտաբա-կապիտան Վարդան Ջաղինյանը:Վճռական գրոհից առաջ կապիտանը ավարտել էր իր խոսքը նախնիների իմաստուն պատգամով՝ «...Մահն իմացյալ անմահություն է...»: Մայիսի 24-ին Արարատյան դաշտ մտան թշնամու նոր ուժեր: Գրոհները հետևում էին մեկը մյուսին, բայց ամեն անգամ բախվում հայերի միահամառ ու կատաղի դիմադրությունը: Ճակատամարտի վերջին գիշերը Սարդարապատի ճակատամարտի մասնակից , ռուսական բանակի կապիտան Ալեքսանդր Շնեուերը իր հիշողություններում գրում է. «...Այդ գիշեր ոչ ոք չքնեց, բոլորը գիտեին, որ առավոտյան անհավասար մարտ է լինելու... մեր հրամանատարությունը գնդապետ Փիրումյանի ղեկավարությամբ նախատեսել էր ամեն ինչ...Առավոտյան, արևի առաջին շողերի հետ միաժամանակ , ռազմաճակատի ամբողջ գծով լսվեցին համազարկեր երկու կողմերից... Մի քանի անգամ թուրքերը փորձեցին գրոհել մեզ , բայց ամեն անգամ անհաջող...Կեսօրին մեր զորամիավորումները, ինչպես պայմանավորվել էինք, շղթա կազմած, «ուռա» գոռալով անցան հարձակման...Առջևից գնում էր մեր հրամանատարը՝ գնդապետ Փիրումյանը...հայերի հարձակումը ահեղ էր, ջախջախիչ...Անձնազոհ կռվում էին բառացիորեն

բոլորը՝ սպաները, զինվորները, աշխարհազորայինները, գյուղացիները...Կարծես խիզախության մրցություն էր...»[4,էջ 7] 3.Սարդարապատի հաղթանակը, Ս. Աֆանասյան, Երևան, 1991, ջ 51. 4.Սարդարապատ, Հ. Հակոբյան, Ա. Ավետիսյան, Երևան, էջ 7 ։

Ժողովրդական բանակը անընդհատ համալրվում էր բանվորներով, շինականներով ու մտավորականության ներկայացուցչներով:Աշխարհազորի մեջ մարտնչում էին ընտանիքներով, մի



պապը, հայրը, որդիները, թոռները, ծոռները: Կամավորական շարք ջոկատներ ղեկավարում էին նախկին ռուսական Կովկասյան բանակի քաջարի սպաները: Գլխավոր շտաբի մայիսի 24-ի հաղորդագրությունը լավատեսական էր. «Սարդարապատում ձեռք բերված հաղթանակի լուրը ստանալուց հետո Բեյ-Մամիկոնյանի զինվորների մեջ վերականգնվեց հավատը:Զորամասերին հրաման է տրված շարժվել դեպի Համամլու»:[3 , էջ 61] 6 Լիակատար ջախջախումից խուսափելու համար, թուրքական 36-րդ դիվիզիայի և քրդական հեծյալների մնացորդները փախան Արաքսի ու Արփաչայի աջ ափը:Մայիսի 30-ին, օրվա վերջին լսվում էին կրակոցներ երկու կողմից այս կամ այն վայրում: Գիշերը վրա հասավ, թուրքերն անընդհատ կրակ էին բացում:Լսվում էին նրանց ճիչերը՝ «Ալլահ, ալլահ»:Կարծելով, որ դա նրանց անխուսափելի հակահարձակման նշան էր, հայերը պատրաստվում էին այն ընդունելուն:Բայց շուտով պարզ դարձավ, որ դա սոսկ մի հնարք է. թուրքերի կողմից սարքված այդ ներկայացումը կոչված էր քողարկելու նրանց նահանջը դեպի Ալեքսանդրապոլ՝ խուսափելով հետապնդումից: Տեսնելով թշնամու հապճեպ փախուստ, գեներալ Սիլիկյանը, սովորաբար շրջահայաց ու զգույշ, ցանկանում

էր նրան հետապնդել մինչև Ալեքսանդրապոլ, հավատացած լինելով, որ ինքը կկարողանա երկու օրում ազատագրել քաղաքը:Նույն կարծիքին էր գնդապետ Վեքիլովը: Հիրավի, հաղթանակից հետո հայկական զորքի ոգին այնպիսին էր, որ թվում էր թե ոչինչ չէր կարող նրանց կանգնեցնել: [4, էջ344] Սակայն մայիսի 30-ին Երևան ժամանած գեներալ Նազարբեկյանը արգելեց այդ օպերացիան, բավարարվելով նրանով, որ անձամբ ուզեց պարգևատրել աչքի ընկած մարտիկներին:

Գլուխ երկրորդ

Սարդարապատի հերոսամարտի նշանակությունը

Սարդարապատիը խորհրդանիշն է պատվի ու ազատության համար մղված պայքարի, մի պայքարի, որը պահանջում էր ինքնահրաժարում ու գերմարդկային զոհաբերություններ, մի հրաշք, պայմանավորված ամբողջ մի ժողովրդի կամքով ու վճռականությամբ՝ մեռնել զենքը ձեռքին Արարատյան դաշտում, Էջմիածնի պատերի տակ, բայց թույլ չտալ, որ բարբարոսությունը ամբողջացնի իր գործը:Այդ հաղթանակը անսպառ ոգևորության աղբյուր է:Նա ապացուցում է, որ այս մարտիրոսացած ժողովրդի երակներում տակավին հոսում է, ինչպես դար առաջ Ավարայրում, արյունն այն հերոսների, որոնք ստեղծել են նրա պատմության հաղթանակած ժամերը:

Սարդարապատի հաղթանակը ձեռք բերվեց այն մարտիկների կողմից, որոնք ծագումով Հայաստանի գրեթե բոլոր շրջաններից էին:Եվ կարևոր չէ, որ դա տեղի է ունեցել հանգամանքների բերումով:Գլխավորն այն է, որ դա նախախնամության կամքն էր:Դա ոչ «ռուսահայերի» և ոչ էլ «թուրքահայերի» հաղթանակն էր, այլ այն հայերի, որոնք կռվում էին ընդհանուր գործի համար՝ իրենց նախնիների հուշերի մնացած մի փոքր կտորի վրա ազատ ապրելու հուսահատ ճիգերում: Սարդարապատի հաղթանակը հայրենասիրության, սխրանքի, անձնազոհության ու ժողովրդի միասնության դրսևորում էր: Հայ ժողովուրդը երբեք չի մոռանա Սարդարապատի հերոսներին՝ գլխավոր հրամանատար գնդապետ Դանիել Բեկ Փիրումյանին, ջոկատների հրամանատարներ Դոլուխանյանին, Պավել Փիրումյանին, կապիտաններ Սերգո Աթանեսյանին, Վարդան

Ջաղինյանին, Խորեն Իգիթիանյանին, Ստեփան Խաչատրյանին, Կարաքեշիշյանին և հարյուրավոր շարքային մարտիկների ու կամավորների: Սարդարապատի հերոսամարտը ժողովուրդների բարեկամության վառ վկայությունն էր ու արտահայտությունը:Ռազմի դաշտում կողք-կողքի կռվում էին հայն ու ռուսը, հույն ու քուրդը և այլազգիներ, որոնք իրենց անունները փառքով պսակեցին: ,,Այստեղ չենք կարող առանձին գոհունակությամբ չհիշատակել եզդիներու ցեղապետ Ջհանգիր աղայի խիզախ և անվեհեր ճակատամարտերը գեներալ Սիլիկյանի զորամասերուն հետ , անոնց կողքին և առաջին գիծերուն վրա; [5,էջ 375] Սարդարապատի ճակատամարտում անձնազոհության ու հերոսության օրինակներ ցույց տվեցին նաև հայ մտավորականության ներկայացուցիչները, սովետական խոշոր գիտնականներ Գրիգոր Ղափանցյանը, Արարատ Ղարիբյանը, Արամ Աբրահամյանը, տարեց ուսուցիչ Բահաթուր Բահաթրյանը, պատանի բանաստեղծ Ակսել Բակունցը: Մեծ է եղել եզդի ժողովրդի և նրա զորահրամանատար Ջհանգիր աղայի ներդրումը: Եզդիները հայերի հետ ենթարկվել էին ցեղասպանության, և այժմ, թուրքերի հաղթանակի դեպքում, նրանց սպասում էր վերջնական ոչնչացում: 1918 թվականին, երբ թուրքերը սկսեցին լայնածավալ հարձակում, կային հայկական ձևավորված հզոր ուժեր՝ Հայկական ազգային կորպուսը՝ երկու դիվիզիայով և կորպուսային զորամասերով ու ստորաբաժանումներով: Ահա թե

ինչու խիստ դժվար էր թուրքերի առաջխաղացումը Արևմտյան Հայաստանից մինչև Արևելյան

Հայաստանի մերձկասպյան գավառները: Թուրքերի հարձակումը Երզնկայից մինչև Բաքու տևեց մոտ ինը ամիս: Հայերի կողքին կռվում էին նաև նրանց թեկուզ փոքրաթիվ, սակայն հավատարիմ դաշնակիցները: Այդ թվում՝ եզդի նվիրված և քաջ մարտիկները: Ջհանգիր աղան առանց որևէ հրամանի և աջակցության հարձակվեց թուրքական զորքերի վրա՝ այդպիսով սատարելով բարեկամ և եղբայր հայերի բանակին:

Սարդարապատի ճակատամարտն ավարտվեց թուրքական գերակշիռ ուժերի դեմ տարած լիակատար հաղթանակով:Սարդարապատի ճակատամարտին մասնակցել է մոտ 8.500 հայ և մոտ 500 եզդի մարտիկ: Սարդարապատի ճակատամարտին գրեթե զուգահեռ ընթացող Բաշ-Ապարանի մարտերին ընդհանուր հաշվարկով մասնակցել է մոտ 5.500 հայ զինվոր, որոնց հետ ուս-ուսի թուրքերի դեմ կռվում էին մոտ 500 եզդիներ՝ Ջհանգիր աղայի հրամանատարությամբ: Եզդի ժողովրդի դերը այս ճակատամարտերում շատ գնահատելի է եղել: Այդ դժվարին օրերին Ջհանգիր աղան նաև կարևոր դեր էր տանում ռազմաճակատում և թիկունքում՝ իր շուրջ համախմբելով հայ և եզդի շատ ֆիդայիների: Սա ցույց էր տալիս, որ հայերը փոքր ազգերի նկատմամբ ունեցել են խիստ

մարդկային, բարեկամական ու եղբայրական վերաբերմունք, որն էլ փոխհատուցվում էր փոքր դաշնակիցների՝ հայերին ցուցաբերված անկեղծ ու նվիրյալ զինակցությամբ: Հայ ազգը հաղթեց նաև իր մարդկային ու լայնախոհ քաղաքականության շնորհիվ, որը հակադրվում էր թուրք ագրեսորների ռասիստական և անմարդկային քաղաքականությանը:

Սարդարապատի հերոսամարտում թուրքական բանակի առաջ կանգնած էր ոչ թե մի անկանոն բանակ, այլ եղեռնի սարսափները տեսած մի ժողովուրդ, որը իր լինել-չլինելու պետք է

ինքը լուծեր, պատմությանը մատուցելով հերոսության նորանոր օրինակներ, ցույց տալով

ազատության ու գոյատևման համար կռվող ժողովրդի ուժը:

Սարդարապատի 9-օրյա ճակատամարտն ավարտվեց հայերի լիակատար հաղթանակով, որի արդյունքում հակառակորդը ջախջախվեց ու հետ շպրտեց 50-65կմ,վերացվեց Երևանին սպառնացող անմիջական վտանգը:Հաղթանակը վճռական դեր խաղաց Արևելյան Հայաստանի դեմ թուրքական զորքերի արշավանքի մասնակի ձախողման և, մասնավորապես մյուս ճակատներում՝ ԲաշԱպարանում հաղթական հակահարվածի և Ղարաքիլիսայում հերոսական պաշտպանության ապահովման գործում: Սարդարապատի հերոսամարտը տեղի բնակչությանն ու արևմտահայ գաղթականներին փրկեց անխուսափելի ջարդերից:Կազմակերպչական մեծ ջանքերի գնով տարած հաղթանակը նպաստեց նաև Երևանում գործող քաղաքական ու հասարակական կազմակերպությունների, ինչպես նաև տեղի ղեկավար մարմինների ու առաջատար գործիչների դերի ամրապնդմանը, փաստացի հիմք դրվեց նորահռչակ Հայաստանի Հանրապետության կայացմանը:



Սարդարապատի հերոսամարտը անվանում են նաև «20-րդ դարի Ավարայր»։

1968 թվականին Սարդարապատի նշանավոր ճակատամարտի վայրում հայ ժողովրդի հաղթանակի 50-ամյակի կապակցությամբ հանդիսությամբ բացվեց Սարդարապատի հերոսամարտի հուշահամալիրը, որի հեղինակներն էի ժամանակի մեր լավագույն արվեստագետները՝ ճարտարապետ Ռաֆայել Իսրայելյանը և քանդակագործներ Արա Հարությունյանը, Արշամ Շահինյանն ու Սամվել Մանասյանը։Հայ մեծանուն ճարտարապետ Ռաֆայել Իսրայելյանը նախագծել և Սարդարապատի հուշահամալիրից ձախ, փոքր բարձունքի վրա կառուցել է Հայաստանի ազգագրության թանգարանի շենքը, որն իր ծավալով ու գաղափարով լրացրել և ամբողջացրել է համալիրը՝ դառնալով Հուշահամալիրի օրգանական մասը։

Զանգակատան կառուցման հարցում էական դերակատարում են ունեցել ճակատամարտի նախօրեին տեղի ունեցած իրական դեպքերը։ Երբ Նորին Սրբություն Գևոր V-ին խնդրեցին հեռանալ Սուրբ Էջմիածնից և տեղափոխվել Սևանա լճի կղզու վանքը, նա դուրս եկավ տաճարի բակում կանգնած ժողովրդի մոտ և ասաց, որ չի լքի հայկական բոլոր եկեղեցիների մայր եկեղեցին, որը մեր նախնիներից է ժառանգվել։ «Եթե հայկական բանակը և հայ ժողովուրդը չկարողանա թշնամուն կանգնացնել, չկարողանա փրկել մեր սրբությունները, ապա ես պատրաստ եմ մեռնել հենց այս պահին, այստեղ, մեր տաճարի շեմին, որպես ձեր հոգևոր հայր։ Եվ եթե վերջը եկել է, ապա ինչու չմեռնել պատվով և արիաբար, չսողալով թշնամու առաջ»։ Կաթողիկոսը բոլոր եկեղեցիներին և հոգևորականներին հորդորեց ժողովրդին մարտի հանել։ Եվ մայիսի 21-29 Արագածոտնից մինչև Սևան հնչում էին եկեղեցիների զանգերը, բոլորին կոչ անելով ռազմաճակատի դաշտ գալ։ Այսօր երեք շարքով կախված են հուշահամալիրի զանգերը։ Դրանք կարծես պատրաստ են զանգահարելու և ոտքի հանելու

ժողովրդին վտանգի պահին, ինչպես այն դաժան պայքարի օրերին, երբ զանգերը վեց օր շարունակ ղողանջում էին՝ ժողովրդին հանելով ազատագրական պատերազմի՝ ղողանջը տարածելով ամբողջ Արարատյան դաշտով։

ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

Սարդարապատի ճակատամարտը գնահատվում է որպես հայ ժողովրդի ազատագրական պայքարի փայլուն էջերից մեկը: Տարած հաղթանակի շնորհիվ Արևելյան Հայաստանի զգալի մասը փրկվեց թուրքական զավթումից, և հնարավորություն ստեղծվեց պետականության վերականգնման համար:Կյանքի ու մահվան եզրին կանգնած հայ ժողովուրդը ոչ միայն պահպանեց իր ֆիզիկական գոյությունը, այլև ստիպեց հակառակորդին՝ հաշվի առնել իր հետ և ճանաչել իր անկախ ապրելու իրավունքը:Սարդարապատը խորհրդանիշն է պատվի ու ազատության համար մղված պայքարի , մի պայքարի , որը պահանջում էր ինքնահրաժարում ու գերմարդկայի ն զոհաբերություններ , մի հրաշք , պայմանավորված ամբողջ մի ժողովրդի կամքով ու վճռականությամբ՝ մեռնել զենքը ձեռքին Արարատյան դաշտում , Էջմիածնի պատերի տակ , բայց թույլ չտալ, որ բարբարոսությունը ամբողջացնի իր գործը: Այդ հաղթանակը անսպառ ոգևորության աղբյուր է :Նա ապացուցում է , որ այս մարտիրոսացած ժողովրդի երակներում տակավին հոսում է, ինչպես դարեր առաջ Ավարայրում, արյունն այն հերոսների, որոնք ստեղծել են նրա պատմության հաղթանակած ժամերը: Սարդարապատի հաղթանակը ձեռք բերվեց այն մարտիկների կողմից, որոնք ծագումով Հայաստանի գրեթե բոլոր շրջաններից էին:Եվ կարևոր չէ, որ դա տեղի է ունեցել հանգամանքների բերումով:Գլխավորն այն է, որ դա նախախնամության կամքն էր:Դա ոչ «ռուսահայերի» և ոչ էլ «թուրքահայերի» հաղթանակն էր, այլ այն հայերի, որոնք կռվում էին ընդհանուր գործի համար՝ իրենց նախնիների հուշերի մնացած մի փոքր կտորի վրա ազատ ապրելու հուսահատ ճիգերում: Սարդարապատի, Բաշ-Ապարանի, Ղարաքիլիսայի և ավելի ուշ Բաքվի կռիվներում մեր հերոսների թափված արյունը հնարավորություն տվեց դնել պետության հիմքը և ապահովել երեք հազարամյա ազգի շարունակությունը, ուրեմն և Խորհրդային Հայաստանի գոյությունը: Մայիսյան հերոսամարտը ամբողջ հայ ժողովրդի հավաքական ուժի և ազգային միասնության հաղթանակն էր, հիմք հանդիսացավ Հայաստանի անկախ պետականության համար, ստիպեց հակառակորդին՝ հաշվի նստել և ճանաչել իր անկախ ապրելու իրավունքը: Սարդարապատի ճակատամարտից 54-տարի անց .1972 թվի սեպտեմբերի 3-ին Ամենայն Հայոց կաթողիկոս Վազգեն Ա-ի հատուկ կոնդակով՝,,Մայիսի 22-ը,, մտցվեց Հայ առաքելական սբ. եկեղեցու օրացույցի մեջ , որպես ,,Սարդարապատում զոհվածների հիշատակը ոգեկոչելու օր ,,; Կոնդակով հրահանգվում էր , այսուհետև ամեն տարի ,այդ օրը հայկական բոլոր

եկեղեցիներում կատարել ,,հոգեհանգստյան հանդիսավոր պաշտոններ և պանծացնել նրանց զոհաբերումը `վասն հավատո և վասն հայրենյաց;,[,5],էջ 376։

Օգտագործված գրականության ցանկ

1.Հայոց պատմություն, Հր. Ռ. Սիմոնյան, Երևան, 2012:

2.Սարդարապատ, Հ. Հակոբյան, Ա. Ավետիսյան, Երևան:

3.Սարդարապատի հաղթանակը, Ս. Աֆանասյան, Երևան 1991:

4.Հայ ժողովրդի պատմություն, Մ. Գ. Ներսիսյան, Երևան, 1985:

5. Ռ. Թադևոսյան , Դրվագներ հայոց ռազմական պատմությունից 19-20-րդ դարեր,2014թ.

6.Բագրատ Ուլուբաբյան, Սարդարապատ,1991: